


Հ. Խեմովսկ. յիշ և Առքարանը

Խ-77

Ք Ե Մ Ի Ռ Կ Ա Ն Կ Բ Ա Կ Մ Ա Ը Բ Զ Ն Ե Բ

ՉԵՌՆԱՐԿ

Հրդիստեղ հրահանգիչների, կամավորական հրեց
խմբի պետրի, խոհանուն բյուների կոլեցի-
ուուրյանների յեզ ՄՏԿ ի տնօսավարների համար



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ն
Հ Ա Խ Հ Հ Հ Ր Գ Ե Հ Ա Շ Ե Զ Հ Տ Ս Վ Զ Ո Ւ Խ Ն

Հ Ա Բ Ե Գ Ա Խ Ն

1932

20 JUL 2010

Ռ. ԽՈՍՔՈՅԵՎ, յել Կ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

614.84

M-77

Ք Ե Մ Ի Ա Կ Ա Ն Կ Ր Ա Կ Մ Ս Ա Բ Ի Զ Ե Ե

ԶԵՐՆԱՐԿ

Հրդեհաւեց նրահանգիչների, կամավորական հրեց խմբերի պետերի, խորհինետությունների, կոլտինեռությունների յևը ՄՏԿ-ի սննդավարների համար



ՅԵՐԵՎԱՆ

13 MAY, 2013

3973

Աշխատավորների ունեցվածքի և նրանց կյանքի
ողաշտպան՝ Յերեսանի քաղաքային հրդեհաշեջ խմբին
նվիրում ենք մեր համեստ աշխատությունը:

ՀԵՂԻՆԱԱԿՆԵՐ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Հայերեն լեզվով հրդեհաշեջ գրականության խիստ
կարիքից միտք հղացանք հրատարակել մի շարք գրքեր՝
նվիրված հրդեհաշեջ տեխնիկային՝ հրշեջ տեխնիկան
մասսային հանրամատչելի ձևով տալու նպատակով։

Սոցիալստական շինարարության բուռն տեմ-
պերը, խոշոր սովորող կոլխոզները և մեքենա-տրակտո-
րային կայանները մեզանից պահանջում են պլանային
կարգով պաշտպանել աշխատավորական հսկայական
ունեցվածքը «կարմիր աշաղադի» կործանումից։

Աշխատավորական մասսաները, պետք ե տիրա-
պետեն հրդեհի շինացման տեխնիկային և վճռապես ու
արագ լիկվիդացիալի յենթարկեն հրդեհային ձեղքվածք-
ները։

36758-62

Դադար № 7320 (ր)

Պատվեր № 653

Տերություն 3000

Պետհրատի տպարան, Յերեսան

Տեխնիկան, վերակառուցման օրջա-
նում վճռում ե ամեն ինչ:

Խ. Սալիք

ՔԻՄԻԱԿԱՆ ԿՐԱԿՄԱՐԻՉՆԵՐ

Մարդկային մտքի նվաճումներից մեկը հանդի-
սանում ե կրակի գյուտան ու նրա զարգացումը. մարդը
կատարելագործեց ու մշակեց կրակն իր գոյրւթյան
պահպանման պայքարի համար. նա ստիպված եր իր
գոյրւթյան համար միջոցներ ստեղծել և գտավ կրակը:
Հավանական ե, զոր մարդն սկզբներում կրակը
վերցրել ե հրաբուխից վառվող անտառից կամ կայծա-
կի հարվածից ալրվող ծառի չոր փշտկից:

Կրակն անհրաժեշտ ե մարդու համար իր առորյա-
կանքի բոլոր բնագավառներում (իբրև լույսի, ուժի և
տաքության աղբյուր), կրակն ամբողջապես յենթարկ-
վում ե մարդու կամքին, և նա խելացիորեն ոպտագոր-
ծում ե նրան, բայց դուրս գալով մարդու անորինու-
թյան սահմաններից, կրակը գառնում ե նրա մահացու-
թշնամին, ջանալով սպառնալ մարդուն, զորին իր բա-

ըիքները տվել ե կրակը մինչև ալդ։ Յեվ մարդու տնո
ըինության սահմաններից դուրս գալն ե, վոր կոչվուա
ե հրդին։

Հրդելը (կամ մասսակար կրակը) մարդուն տալիս
և անհաշիվ մասներ, վոչնչացնում և մարդու ջանքերով
դարերի ընթացքում կուտակված ժողովրդական թան-
գարժեք հարստությունը, յերբեմն վոչնչացնելով նաև
մարդկալին կլանքը։

Մարդը, վոր սովոր եր ձեռք, բերելու կրակը,
առաջին խկ պահին ընդհարվեց նրա հետ իբրև թշնա-
մու և իր հետագա զարգացման ընթացքում կովի
դուրս լեկավ մասսակար կրակի դեմ, իմանալով ջրի
աղդեցութան նշանակությունը կրակի վրա։

Հրդենի մարման ամենահժան և ազդիչ միջոցը
հանդիսանում ե ջուրը։ Նա կրակի վրա ազդում և հե-
տեւալ միջոցներով՝ 1) մարելու միջոցին ծածկում ե
վառվող առարկալի մտկերեսը, սապցնում ե նրան և
իջեցն ամ չափրվելու համար անհրաժեշտ աստիճանին,
2) ջուրն ուժեղ ցալտերով ալրվող առարկայի վրա՝
վալրկանապես գոլորշիանում ե (մեկ լիտր ջրից ստաց-
վում ե 1700 լիտր գոլորշի)։ Գոլորշու աղդեցությունը
չեզոքացնում ե ալրվող մակերեսը թթվածնից ու ալդ-
պիսով դադարեցնում վառվելը։ Ջուրը հրդենի հանդ-
ցընելու համար հրաշալի միջոց ե, բայց հաճախ անհրա-
ժեշտ ե ջրի գործադրումը՝ մեծ քանակով, այլ կերպ,
ջրի քիչ լինելու դեպքում, կարող ե նա լուծվել իր որ-
դանական մասերի հետ (ջրածնի և ածխածնի), վորոն-
ցից ասաջինն ալրվում ե, իսկ լերկը դըլը՝ նպաստում
ալրվելուն, 3) ջուրը կարող ե նպաստել նաև պայթու-
ցիկ գազերի առաջ գալուն (աղդեցությունը կարբեդի

վրա), բարձրացնում և ջերմաստիճանը։ Մարած կիբը
ջրով թրջելիս, նրա տաքության աստիճանը բարձրա-
նում է 800 °C, 4) թանգարժեք իրեր մարելու ժամա-
նակ (նկարներ, գալանտաերիաներ, թանգարանային
իրեր և այլն), ջուրը խոշոր չափով մասներ ե հասց-
նում։

Այս այդ բոլոր, չկատարելագործված, ջրով մա-
րելու միջոցները մարդուն հարկադրեցին ջուրը փոխա-
րինել մի ուրիշ, ավելի հժան ու կայուն միջոցով։
Առանձնապես այդ նկատվում եր այն ժամանակ, յերբ
ջրի աղդեցությունը նրանից թեթև հեղուկներին (վո-
րոնք չեն միանում ջրի հետ), իրենց տեսակարար կշի-
ռով, դուրս ե հանում ջրի յերեսը (որինակ՝ զանազան
լուղեր, բենզին, նավթ, եֆիր, մոմ և ալին)։

Այդ բոլորի հետևանքով հետագայում առաջ լեկան
զանազան կրակ մարող փոշիներ, վորոնց ներգործելու
սկզբունքն հիմնականում կալանում ե նրանում, վոր
մի շալը մարմիններ խառնվելով կրակին՝ առաջ են
բերում գազեր, վորոնք, չվառվելով, լցնում են ամբողջ
ալրվող տարածությունն ու խոչընդուն հանդիսանում
թթվածնին՝ մոտենալու վառվող առարկացին։

Որգանական մասերից ամենալավերն են սելիտրա
55 %, ծծումը 40 % և մնացած մասերն են փայտածուխ
կամ կանիֆոլ։

Մյուս խումբը փրփուր առաջացնողն ե, վոր գոր-
ծում ե գազային լուծույթով։ Նրա լուծույթալին մա-
սերը կազմում են նաև արիում-սողա, ծծմբաթթվալին
պլամին, ծծմբաթթու՝ ջրի խառնութզով և փրփուր
առաջացնող փոշի (լակրիցա կամ ոճառարմատ)։

Ալսպիսով՝ հրդեններ մարելուց համար հնարդին ե

կրակմարող միջոցներ, վորոնք մշտագես գտնվում են մարդու ձեռքի տակ և ընդունակ են ամեն բոլոր նրան հասցնելու անգնահատելի ոգնություն՝ թշնամու— հրդեհի դեմ կովելու գործում, նույն իսկ մի մարդու ուժով:

Նման համապատասխան գործիք հանդիսանում է ձեռքի քիմիական կրակմարիչը: Խնչումն ե կալանում այդ անգնահատելի կրակմարիչի ոգնությունը. 1) նրա մշտական պատրաստ լինելը գործածության համար, ունենալով իր հետ պահեստի կրակ մարդող նյութեր ավելի լավ, քան մուս մարող միջոցները, որինակ ավազ, ջուր, հող և ալյն, 2) ոգտագործման ժամանակ նրա թեթև և հարմար լինելը, անհրաժեշտության դեպքում մի տեղից միւսը տեղափոխելը, 3) բացի այն, վոր նա ոգտագործվում ե մի մարդու ուժով, կրակմարիչն աշխատում ե ավտոմատ՝ կերպով, իսկ մարդու անհիգրք կայանում ե միայն նրանում, վոր նա դուրս ցալտած նյութն ուղղում ե հրդեհի վրա:

Մեզ ճոտ գործածության մեջ յեղած կրակմարիչները բաժանվում են յերեք տարբեր տեսակի. 1) չորփոշյա նյութով գործող կրակմարիչ, 2) հեղուկային փրփուախառն նյութով գործող կրակմարիչ և 3) թանձր փրփուր պարունակող նյութով գործող կրակմարիչ:

ԶՈՐ-ՓՈՇՅԱՆ ՔԻՄԻՍԿԱՆ ԿՐԱԿՄԱՐԻՉՆԵՐ

Փոշյա կրակմարիչները, իրեն ամենահասարակ ձև ունեցողներ, հանդիս իւկան 20-րդ դարի սկզբներում: Այս անոթները լցված են կրակմարող փոշիով: Արտաքին տեսքով այդ յերկաթե զլանները (պլաստ), վորոնք կոչվում են Մոմենտ, կամ՝ ջահաճեվ, վոր կոչվում

ե պիոներ. նրանք ունեն 2—4 լիտր տարրողություն: Նրանք ամուր ծածկված են կափարիչով և ունեն կախելու ողակ: Այդ կրակմարիչների լուծույթի սովորական կազմությունն ե՝ սոդա, աղ, սելիտր, ծծումբ, վորես ներկ՝ ուզած գույնը ներկելու համար: Փերուն դրությունը պահելու համար խառնում են գիպս կամ կրետինով: Հրդեհի ժամանակ, Մոմենտ տիպի կրակմարիչի գործածելու ձեռն ամենահասարակն ե: Կրակմարիչի վարի մասը պետք ե բոնել ձեռքով և ձգել կախված տեղից. ձգելիս կափարիչը մնում ե մեխի վրա կախված. մի քանի կարճ ցնցումներից մըջի փոշին պետք ե թափել կրակի վրա այնպես, վոր ստացվի հավասարաչափ փոշիացում. գործիքի վերեկի մասում կա մետաղե մանր ցանց: Փոշու գործադրությունը կրակի վրա տալիս ե հետեւալ արդյունքները. փոշին ծածկելով վառվող առարկայի մակերեսը՝ արգելում ե ողի մոտեցումն առանձն ացող գաղերով և հաստ ու ամուր զանգվածով դադարեցնում կրակը:

Նրա ունեցած ամենական թերությունները գործածությունից հանեցին կրակմարիչների այդ տեսակները և այժմ դրանցով չի հանձնարարվում կրակ մարել: Նման կրակմարիչների պակասությունը կալանում է հետեւալում. նրանք միշտ հաջող չեն հանգցնում: Իերբեմն բավական ե ողի փոքր շարժում, վոր քիչ առաջ, կարծես, մարտ առարկան նորից բոցավովի. այս բանը տեղի յե ունինում նրա համար, վոր բացակալում ե վառվող առարկայի սառեցումը:

Ուղղահայաց առարկաների, ինչպես և առաստաղների հրդեհի ժամանակ հնարավոր չի փոշու միջոցով կրակ մարելը, ինչպես և բարձր տաքության և ծիփի ժամանակ դժվար ե մոտենալ վառվող առարկաներին,

վարով աննպատակ և գառնում Մոմենտ կամ Պիոներ
կրակմարիչների զործածումը

Անա այն պատճառները, վորոնք հարկադրում են
մեղ չհանձնարարել այդ կրակամրիչների ոգտագործ-
ման դիմելու, վորովինետև, ուրիշ կրակամարիչների հա-
մեմատությամբ, մեր պահանջները շատ քիչ են բա-
վարարում, իբրև քիչվստահելի միջոց՝ հրդեհից պաշտ-
պանվելու համար։ Դրա համար ել պետք ե նկատի
ունենալ, վոր նման չոր կրակմարիչները հրդեհ մա-
րելու զործում բացաբակապես քիչ ոգուա են տալիս։

Բայց գոլություն ունեն ուրիշ ավելի ընդունելի,
չոր կրակմարիչները, վորոնք զործադրվում են փոշա-
ծորակով՝ ածխաթթվուատի ճնշման տակ։ Այդ գաղի
եյությունը կալանում ե նըանում, վոր նա իր ուժով
կրակի մակերեսի վրա ուժեղ ծորակով զցում ե կրակ-
մարող փոշին, բացի այդ, նույն կրակմարող փոշու
զործածությունը համեմատաբար շատ ե և նպատա-
կահարմար, քան փոշիացող զործիքի չոր փոշին՝
առանց գաղի ճնշումի։ Ինչպես ներքեում ցուց կտրվի
մի շարք առարկաների հրդեհի մարումը փրփռող կրակ-
մարիչներով անկարելի յե, վորովինետև դա կապված ե
վորոշ վտանգների հետ—մինչև անգամ իրեն՝ հանգը-
նողի համար, վորովինետև փրփռուն ընդունում ե ելեկտ-
րականություն։

Հրդեհի մարելու զործը պահանջ դրեց վերակա-
ռուցել ձեռքի այնպիսի քիմիական կրակմարիչներ,
վորոնցով կարելի լիներ վայրկյանապես գաղի շերտով
կամ մի վորեն փոշով ծածկել վառվող առարկայի մա-
կերեան այն դեպքում, յերբ փրփռակրակմարիչների
զործագրելը պահանջարկ և նույնիսկ վտանգավոր կլի-

ներ մարդու կլանքի համար։ Ծնորհիվ այդ պահանջնե-
րի, մարդկային միտքը հնարեց չորս-փոշից քիմիական
կրակմարիչներ, վորոնց կազմի մեջ միացված են փոշի
ու ածխաթթու։

Այդպիսի կրակմարիչներն առանձին ոգուա են
բերում միքամի ոբյեկտներ հանգնելու զործում, որի-
նակ՝ ավտոմոբիլների, մատորով նավակների, ինքնա-
թիռների, բարձր հոսանքի ելեկտրո-լարերի, շնորհիվ
իր վոչ ելեկտրուանցման։ Նրա նույնպես անվտանգ
փոշայ ծորակը հնարավորություն ե տալիս զործածե-
լու թանգարժեք իրերի և հոսությունների ալրգելու
դեպքում։ (որինակ՝ նկարների, գալլերաների և այլն),
Առանձնապես այդ տեսակի կրակմարիչը նպատակա-
հարմար ե նրանով, վոր նրանց լուծույթը բոլորովին
չի սառչում և կարելի յե կիրառել ամենացուըտ յեր-
կրներում, բայց այդ տեսակի կրակմարիչները դեռևս
կատարելագործված չի կարելի համարել, մի շարք հիմ-
նական բացեր ունենալու պատճառով, վորոնք նվազ-
գեցնում են նրա արժեքն ու ազդեցությունը—1) կար-
ճատև զործողությունը (15—20 վայրկյան), 2) բալոնի
մեջ մշտական ածխաթթվի պակասումը բարձր ճնշման
հետևանքով, 3) փոշու վոչ փիրուն զրությունը, վորի
պատճառով դուրս ցայտող անցքը փակվում ե, որա
համար ել պետք ե վեց ամիսը մեկ անգամ բացել փո-
շու բալոնը և մանրել կոշտացած մասերը և նորից
լցնել իսկ ամիսը մեկ անգամ կանոնավոր կերպով
պետք ե կշռել ածխաթթվային գաղով լիքը բալոնը, և
յերբ յերեաց, վոր ածխաթթուն պակսել ե 10% ից
ավելի, այդ դեպքում պետք ե բալոնը փոխարինել նո-
րով։ Փոխարինելու դժվարություններից մեկն ել կա-

յանում ե նրանում, վոր նրա վերալցնելը կատարվուա
և միմիայն այն գործարանում, վորտեղ պատրաստում են
բալոններ, սակայն իրենց ամբողջ կառուցվածքով
նման կրակմարիչներն ավելի բարդ են, քան փրփրա
կրակմարիչները:

Մանոթանալով բոլոր տեսակի կրակմարիչների
բացասական և դրական կողմերին՝ անցնենք նրանց
նկարագրության ու գործածության ձևերին:

Այդպիսի կրակմարիչների տիպիկ որինակը հան-
դիսանում են «Թալիֆունը» և «Տիտանը»:

1. ԹԱՅՑՖՈՒՆ

Թայֆունը բաղկացած է լերկու բալոնից, վորոն-
ցից մեկում ածխաթթվալին ճնշված զաղն ե, իսկ մյու-
սում՝ կրակմարող փոշին. այդ լերկու բալոնը միաց-
վում են փակ ան կափուլը (վենտիլ) միջոցով։ Փո-
շայ բալոնն ունի մանր ճակոտիներով ծոված խողո-
վակ, վորը գնում է փոշը բալոնի գուրս ցայտող անց-
քի փակման կափուլը մինչև այն անցքը, վորտե-
ղից դուրս ե զցվում փոշին։ Այդ բալոններից մեծը,
վորի մեջ գտնվում է փոշին, շինված ե լերկաթից,
ծածկվում ե պղնձեն նկելյա կափարիչով, իսկ փոքր
բալոնը՝ ածխաթթվածնովը, շինված ե փափուկ պող-
պատից՝ փակվում է կափուլը։ Նրա վերին մասում
հարմարեցված ե շուտ ծուլվող մետաղե ապահովիչ,
վոր բացվում է տաքության հավասար ճնշումից (բա-
լոնի մեջ մինչև 100°), Միջին տեսակի կրակմարիչի
լուծութները հանդիսանում են, 1) 400 զրամ ջրի-
ածխաթթվածին, վոր գտնվում է փոքր բալոնի մեջ և
չորացրած նատրիում-սոդա 98% ու 20 օ կրեմանողի

խառնուրդով 4 կիլո՝ լցված մեծ բալոնի մեջ, 2) իսկ
փոքր տեսակը՝ զլխավորապես ինքնաթիւների համար,
պարունակում ե ածխաթթու 200 զրամ, փոշի 2 կիլո
և 3) մιծ տեսակը, վոր ավելի քիչ ե գործածվում,
ածխաթթու պարունակում ե 500 զրամ, փոշի՝ 4½ կիլո։

Ցուրաքանչյուր կրակմարիչի վրա ցուց ե տրված
թե դատարկ և թե լցված բալոնի քաշը, վորով և հնա-
րավորություն ե տրվում կշռելու միջոցով նշանակված
ժամկետին պարզել մնացած ածխաթթվածնի քանակը։

Թայֆուն կրակմարիչի գործածության համար,
անհրաժեշտ ե պահել նրան ուղղահայց դրությամբ,
աջ ձեռքով բռնել ածխաթթվի բալոնի վերին մասում
գտնվող կափուլից, իսկ ձախ ձեռքով՝ դուրս ցցող
անցքի մասից ու պտտել կափուլը աջից ձախի;
մինչև վերջ ապա մեծ բալոնից խողովակի միջոցով
գազը փոշու հետ արագ ուժով դուրս պետք ե ցցել
ապարատից և ուղել վառվող առարկալի վրա, վորը
ցայտում ե մինչև 4 մետր տարածություն։

ԱՊԱՐԱՏԻ ԼՑՆԵԼԸ

1. Բաց և արվում մեծ բալոնի վրալի կափարիչը
2) ապարատը լցվում է փոշով, 3) կափարիչը նորից
դրվում է տեղը և ամրացվում մինչև վերջ, 4) ածխա-
թթվածնի բալոնը միացվում է մեծ բալոնին միացնող
պտուտակի միջոցով։ Միացնելուց առաջ ստուգվում ե
փոքր բալոնը՝ կշռելու միջոցով։

Կան նման, բայց զանազանաձև չոր կրակմարիչ-
ներ, վորոնց փոշա բալոնի կափարիչն ամուր կերպով
միացված ե թթվածնի բալոնի կափուլին, իսկ վերջին-

նըս հագցված ե փոշլա բալոնի մեջ։ Այդպիսի կրակ-
մարիչներն ավելի գործնական են, վորովիետեւ, բացի
պահպանման ու փոխադրման հարմարություններից,
ժամանակին կաբելի յե նկատել գոզի պակասումը։
Դրա նշաններն այն են, վոր գազի դուրս գալու միջո-
ցին դուրս ե թափվում նաև փոշին։ Բայց նրա հիմնա-
կան պակասություններից մեկը հանդիսանում է լցնե-
լու բարդությունը, վորի ժամանակ անհրաժեշտ և ած-
խաթթվով լիքը բալոնը դնել փոշլա բալոնի մեջ։ այդ
միջոցին փոշյա բալոնը դարձնելիս կտրիք ե լինում
անհանգստացնել և ածխաթթվութի բալոնը, վտանգե-
լով թթվութի պակասում։

2. ՏԻՏԱՆ

Տիտանը տարբերվում է նրանով, վոր թթվածնի
բալոնը հարմարեցված ե փոշյա բալոնի առաջին մա-
սում և ապա՝ դուրս զցող անցքն ունի առանձին լեր-
կարավուն տեսք։ Փոշյա բալոնի տարողությունը 9
լիտր ե, կրակմարիչի լիցքը բաղկացած ե, ա) 380—420
գրամ հեղուկ ածխաթթվից, բ) 7 կիլո փոշուց, վորի գլո-
խավոր խառնուրդը ներկայացնում ե նատրիում-սոդա,
մի մասը՝ ոկիս մագնիս և քիչ մասը՝ ածխաթթվալին
սոդա։

Լցնելն ու գործադրումը կատարվում է Թայֆունի
պես, միայն այն տարբերությամբ, վոր գործադրման
մոմենտին ապարատը պահպում է կրծքի վրա և, Թայ-
ֆունի նման, ելեկտրականություն չի անցկացնում։

3. «ԹԱՅՖՈՒՆԻ – ԳԻԴԱՆԾ»

Գործադրությանը մեծ ուժ և եփեկտ տալու հա-
մար, խորհրդային Տրեմաս գործարանում պատրաստ-

վում են շարժվող «Թայֆուն-գիդանտ» տիպի անիվա-
գոր չոր կրակմարիչներ։ Այդ ապարատը կազմված է.
1) զլանած մարմնից, վորի մեջ լցվում է մատ 140
կիլո փոշի և 2) պողպատե բալոնից, վորի տարողու-
թյունն է 10 կիլո ածխաթթվու։ Այդ բալոնը միացված
է ապարատի հետ միացնող պտուտակամոր (գայկա)
միջոցով։ Մարմնի վերին մասում գտնվում են յերկու
ապահովիչներ։ Ածխաթթվածնի բալոնի կափույրը բաց
անելիս, բալոնից ածխաթթուն անցնում է մարմնի
մեջ, վորանող գանվում և փոշին և իր ճնշումով ներ-
քին կողմից դուրս ե գցում, վորանող ամրապնդված և
ուստինե խողովակը փողի (բրանսըրու) հետ։

Ապարատը միշտ, մինչև նրան մարտական գործո-
ղության մեջ դնելը, գտնվում է հորիզոնական դրու-
թյամբ հատուկ հարմարանքի վրա։ Ապարատը գործո-
ղության մեջ դնելու միջոցին հարկավոր ե ուղղա-
հայց գրություն տալ նրան և պտտելով բալոնի կա-
փույրը, կրակմարող փոշու ծորակն ուղղել վառվող
առարկային։

Ի՞նչպես պետք ե լցնել ապարատը։ 1) հանել
կափարիչը մարմնի վրայից, 2) մարմնը լցնել կրակ-
մարող փոշով (մոտ 140 կիլո), 3) ծածկել կափարիչը
մինչև վերջ, 4) ածխաթթվով լիքը (10 կիլո) բալոնն
ամրացնել ապարատի մարմնին, պտուտակամոր մի-
ջոցով։

ԳՐՓՐԱԿՐԱԿՄԱՐԻՉՆԵՐ:

Փրփրով հանգժնելու սկզբունքն ու գաղափարը
իրագործվեց 1905 թ. Ռուսաստանում, վորով նրա
պլուտուրար Լորանը մտցրեց հեղաշրջում՝ գոլություն
ունեցող կրակմարիչների մեջ։

Նրա գյուտն ուղղված եր նավթալին հրդեները
հանգնելու համար: Նման տարերային աղետի հանդեպ
ջուրն անզոր եր: Հրդեհի հանգման մյուս ձևերն ևս
(գոլորշիով և զանազան գագերով) իրենց նպատակին
չհասան:

Փրփրով հանգնելու գյուտով, մացած բոլոր
կրակամարէչները մնացին լետին պլանի վրա և փրփռ-
րը հաղթանակեց բոլոր ասպարեզներում:

Ապարատի ծորակից փրփուրը գցվում է կրակի
վրա, հավաքված գաղի ճնշումով:

Գաղն ստացվում է սողալի փոշաջրի և ծծմբա-
թթվի միացման հետևանքով, փրփուրն ուղեկելով ալր-
փող առարկային՝ սացնում է նրան, հանգնում բոցը
ու տալիս ե լիովին եփփեկտ նրանով, վոր ածխաթթ-
վային գաղն առանձնանում ե փրփրից, բաժանում
ե վառլող մակերեսը մաքուր ողից (թթվածնից) և
դրանով իսկ դադարեցնում ե ալրվելլ: Փրփրի ա-
ռանձնահատկությունները կայանում են նրանում, վոր
ալստեղ, ուր օրի ծարակը չընկնելով կրակին, անցնում
է հողին անողուտ: Փրփուր կպչելով, որինակ՝ պատին
բավականին ժամանակ առանձնացնում է ածխաթթ-
վածին: Փրփուրն ընկնելով վոչ ալրվող առարկային՝
կանխում ե հրդեհի շրջապատում լեղած առարկաների
ալրվելը և ժամանակավորապես դաբճնում նրան վառ-
վելու անընդունակ: Փրփուր ամենանվաստավոր ար-
դյունք ե տալիս այրվող ցուրավառ նյութերի (նավթ,
բենզին և այլն) մակերեսին գցելու ժամանակ: Սողա-
լին լուծութի վրա, ծծմբաթթվի գործածությունը,
կամ ծծմբաթթվալին ալյումինը ծծմբաթթվի խառ-


նուրդով, տալիս ե ռեակցիա և նրանք առանձնացնում
են ածխաթթու, վոր փոխվում ե փրփրի:


Եկթե գիտենք վառվող բենզինի մարելու պրո-
ցեսը, այն ժամանակ կնկատենք, վոր փրփուրն ընկնե-
լով վառվող մակերեսին, իսկուն նրան ծածկում ե
շերտով ու թույլ չի տալիս ողի թափանցումը ալրվող
նյութերին, վորովհետև ամբողջ փրփրի շերտը հա-
գեցված ե ածխաթթվածնով:

Փրփրակրակմարէչների տեսակները շատ են:
Հետզհետե կատարելագործվելով սկսեցին միմյանց
հետ մրցել զանազան ձևերի փրփրակրակմարէչներ,
վոմանք բոլորովին դուրս լեկան շրջանառությունից,
ալժմ մեզ մոտ, ստանդարտ տեսակը հանդիսանում են
Տրեմաս գործարանի արտադրած «Բոդատիր» № 1 և 3
կրակմարէչները:

1. «ԲՈԴԱՏԻՐ», № 1-ը

Այս կրակմարէչը ներկայացնում է 9 լիտր տա-
րողությամբ գլանաձև անոթ՝ ապարատի վերի մասում
գտնվող զարկանով, մոտ 4 միլիմետր դուրս ցցող անց-
քով, վոր գտնվում է կողքի կանթի հակառակ կողմը:
Ապարատը վերի մասում ունի անցք: Վորի մեջ դրվում
է կոլբալի ծակոտիներով (վերի մասում) զամբյուղը,
իսկ նրա ներքեմի մասում, միջի կողմից հարմարեցված
ե զսպանակ: Ապարատի վերի անցքով ցցում ե լու-
ծութը և ծածկվում ռետինն ողակի ոգնությամբ, յեր-
կաթե պտուտաձև կափարիչով: Կրակմարէչի մարմնի
վրա շինված են յերկու լերկաթի կամք՝ մեկը տա-
կի, իսկ մյուսը՝ վերեկի մասում, իուրքի վրա:





ԼՑՎԱԾ ԴՐՈՒՅՑԱՄԲ

ԳՈՐԵՌՈՂՈՒՅՑԱՆ ՄՈՄՏԵՏԻՆ

ԲՈԴԱՏԻՐ. ՏՐԵՄԱՍ ԿՐԱԿՄԱՐԻՉՆԵՐԸ

Կրակմարիչի մարմինը պատրաստվում է մեկ միլիմետր հաստությամբ սողապատճից և նրա բոլոր կարերը կպցվում են ավտոգենի յեռացման միջոցով. դրսի և միջի կողմը կլայեկվում է չժանգուտելու համար. Լցված կրակմարիչը քաշում է 12—14 կիլո:

Բոգատիք կրակմարիչի լիցքը կազմվում է. 1) 835 գրամ նատրիում-սողա-լակրիցայի արմատի խառնուրդով, 2) 485 գրամ 45° ծծմբաթթու։ Լակրիցայի արմատը, իրրե բուսականություն, խառնվում է նատրիում սողալին լուծույթին՝ փրփուրն ավելացնելու համար։ Լակրիցան ծմբաթթվին միանալով՝ տարրալուծվում է ու առանձնացնում զաղեր. առաջացնում է ուժեղ լեռոց սողալի մեջ, այդ իսկ պատճառով ել առատանում է փրփուրը։

Փրփակրակմարիչների լցնելու համար պետք

է ունենալ հետևյալ գործիքները. 1) մաքուր դույլ 2) բանալի՛ կափարիչը քանդելու համար, 3) պահեստի ռետինե ողակներ, 4) ցանցավոր ձագար և 5) վորև բուսական յուղ, կափարիչի պտուտակին քսելու համար.

ԿՐԱԿՄԱՐԻՉԻ ԼԻՑԲԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Ե ՀԵՏԵՎՑԱԼ ԶԵՎՈՎ

1) Բանալիով պետք է կափարիչը բաց անել վորի վրա գտնվում ե զարկանը և հանել զամբյուղը. 2) Լվանալ ապարատը մաքուր ջուր, 3) ջուրը լցնել դույլի մեջ կիսով չափ և ամբողջ փոշին (վորը գտնվում է թղթի կամ փայտե փոքր արկղի մեջ) խառնել մինչև հեղուկ դառնալը:

Այդ սողալի լուծույթը ցանցավոր ձագարի միջով պետք է լցնել կրակմարիչի մարմնի մեջ և ավելացնել մաքուր ջուր՝ ծորակից 4 սմ. պակաս, 4) զամբյուղը պետք է հանել և զգուշությամբ մնջը դնել թթվածնով լիքը շնե կոլբան՝ սուր ծայրը վեր՝ հետ դնելով ապարատի մեջ, 5) պետք է ամրացնել զարկանով կափարիչը. զարկանը կափարիչի ամրացնելու ժամանակ պետք է դուրս քաշված լինի մինչև վերջ, կրակմարիչը պետք է լցնել կամ վերացնել միայն այդ նպատակի համար նշանակված լուծույթով։

Այսպիսով ապարատն համարվում է գործածության համար պատրաստ:

Կրակմարիչները պետք է կախ տալ աչքի ընկնող տեղերում. գլխավորապես շենքի յելքի մոտ. անց ու դարձը նրանց մոտ պետք է լինի բոլորովին ազատ, առանց խոչընդոտների։ Ամեն մի կրակմարիչ պետք է կախված լինի ախալիսի բարձրության և հարմար տեղ,

վոր, հարկ յեղած դեպքում, կարելի լինի վերցնել հանգիստ ու ազատ։ Կրակմարիչները պետք ե կախել ուղղահայրաց և վոչ թե թիք. նրանց ծորակը պետք ե լինի մաքուր սոդալից առանձացող մացորդներից, թե դրսից և թե ներսից։ Կրակմարիչներն, արտաքին ազդեցության չենթարկելու համար, չպետք ե կախված լինեն վառարանների կամ այլ տաքացող առարկաների մոտ՝ ինչպես արհեստական, նույնպես և բնական (արևի ճառագալթներ)։ Արևի ջերմությունից ու ճառագալթներից պաշտպանելու համար անհրաժեշտ է, վոր կրակմարիչները դրվեն փայտե արկղների մեջ, ընդհանրապես նման արկղներ պետք ե շինվեն մեկ կրակմարիչի համար։ Հնարավորության սահմաններում կրակմարիչները ցրտից պետք ե պաշտպանվեն ելքարականության կամ այլ տաքության միջոցով։

ԲՈՒԱԾԻՐ ԿՐԱԿՄԱՐԻՉԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԶԵՎՀ

Սառնասրությամբ կրակմարիչը պետք ե վերցնել ձախ ձեռքով վարի, իսկ աջով՝ վերի կանթերից և շուրջ տալ նրան ամբողջ մարմնով ներքեւ, ուժով խփել զարկանը վորեն տմուր առարկալի, ապարատը բռնելով նորմալ դրությամբ և փրփրակալած լուծույթն ուղղել կրակի վրա։ Փրփուրը պետք ե ուղղել ամենաշատ վառվող տեղը, այսինքն՝ կրակի ոջախին։

Զանազան առարկաների մարումը կրակմարի նով։ — Աշխատեալով մարել դյուրավառու նյութեր՝ եփիր, բենզին, կերասին և ալյն (այս դեպքում լավ ե Բոգատիր № 3 կրակմարիչ), հարկավոր ե ծորակն ուղղել այնպես, վոր նա սոլա միայն մակերեսով կամ կպչի ամանի յեղերքին, այդպիսով փրփուրը հավասարապես կծածկի

վառվող մակերեսն ու դրանով իսկ կշեզոքացնի ողի անցումը վառվող առարկալին, բայց լեթե դյուրավառ նյութով լիքն ամանի մոտ վառվում են զանազան ամուր մարմիններ, այդ դեպքում սկզբում անհրաժեշտ ե հանգնել նրանց։ Ամուր առարկաների վառելու ժամանակ (տաշեղ, արկղներ, տակառներ, շինանլութերի մացորդներ և ալյն), մարելը սկզբում ե անպայման ներքեր կողմից ու ապա հետզետե մարումը պետք ե կատարել վառվող առարկալի վերի մասում; Վորովհետեւ կրփրածորի մասնիկները զոլորշիանալով՝ բարձրանում են վեր և դրանով իսկ ոժանդակում հրդեհների մարելուն։

Քիմիական կրակմարիչների պահպանման կանոնները։ — Այսեն մի հիմնարկի անվանգության պատասխանատու անձնավորությունը, հատկապիս հրշեջ աշխատողները, պարտավոր են մանրամասն և ճիշտ իմանալ։

1. Կրակմարիչի սիստեմը և կառուցվածքը;
2. Լցնելու ձեր և նրա ժամանակը. և
3. Նրա ոգտագործելու ձեր՝ հարկ յեղած դեպքում,

Դրա համար հիմնարկը կամ գործարանը պետք ե պահի հատուկ մատյան, վորի մեջ գրվում ե. ա) կրակմարիչի №-ը (բաց թողման), բ) սիստեմը գ) լունելու ժամանակը, դ) լուծույթի տեսակը (սառչող կամ դժվար սառչող), ե) ստուգման ժամանակը և զ) փորձելու ժամանակը։

Այդ մատյանում գրվում են պետական հրշեջ հակող մարմինների կողմից բոլոր նկատողություններն ու պահանջները։

4. Ամեն մի կրակմարիչ պետք և գործադրության համար միշտ պատրաստ լինի:

5. Կրակմարիչն ոգտագործելուց հետո անմիջապես պետք և մաքուր վողողել ու նորից լընել վերևում գրված կանոնների համաձայն լիցը պետք և կատարել միայն նրա համար նշանակված լուծույթով:

6. Կրակմարիչն անտեղի շարժումներից ու փշացույց պաշտպանելու համար պետք և կնքված լինի. կրակմարիչի կնիքը քանդված, կտրված լինելու դեպքում, անհրաժեշտ և ստուգել լուծույթի ճշտությունն ու անվասությունը:

7. Այս կրակմարիչները, վորոնք պետք և կախված լինեն շենքից դուրս կամ վոչ տաքացվող տեղերում անպայման լցված պետք և լինեն չսառչող լուծույթով:

8. Կրակմարիչը լերկու շաբաթը մեկ անգամ պետք և ստուգվի դրսից, վորի ժամանակ անհրաժեշտ և, ա) մաքրել ծորակի անցքը, բ) լաթով մաքրել կրակմարիչի մարմինը փոշուց և կափարեիչը բուղել վորեն լուզով:

9. Վեց ամիսը մեկ անգամ, բոլոր կրակմարիչների 20/0-ը և թվով քիչ կրակմարիչներից, վոչ պակաս քան մեկը, պետք և յենթարկվի ստուգման՝ գործադրության պիտանի լինելու համար:

10. Տարին մեկ անգամ պետք և վերանայել բոլոր կրակմարիչները և պարզել նրանց կանոնավոր ու աշխատառնակ լինելը, մասների դրությունը, կատարել վերալիցք՝ ոգտագործելով նույն լուծույթը (լեթե չի փշացել):

11. Յերեք տարին մեկ անգամ բոլոր կրակմարիչ-

ները պետք և լենթարկվեն հիգրոստուգման (ՀՀ ՀՆՀՊՄ)։

12. Իսկ չոր կրակմարիչների վերաբերմամբ (Թալֆուն, Տիտան) անհրաժեշտ և, ա) վոչ պակաս քան ամիսը մեկ անգամ կշռել ածխաթթվով լիքը բալոնը, Դազի քանակն իմանալու համար, վորեն անկանոնություն հանդես բերելու դեպքում, ձեռք առնել համպատասխան միջոցներ, բ) վեց ամիսը մեկ անգամ ստուգել մեծ բալոնի մեջ զանգող փոշու դրությունը և անկանոն լինելու դեպքում վերացնել բացերը:

13. Կրակամարիչների մոտ պետք և փակցված լինեն գործածության և նրանց հետ վարվելու ձևերի մասին պլակատներ կամ հրահանգներ:

ԽԻԾ ՓՐՓՈՒՐ ԱՌԱՆՉԱՑՆՈՂ ԿՐԱԿՄԱՐԻՉՆԵՐ

Վերևում բերված տիպի կրակմարիչները, վորոնք տալիս են ջրիկ փրփուր (Բոգատիր № 1) ամուր առարկաներ մաքրելու գործում ունեն իրենց գլխավոր նշանակությունը, բայց նրանք կարող են ոգտագործվել նաև դյուրավառ նյութեր (բենզին, հֆիլ, նովթ և ալյու) մաքրելու համար, միմյան շատ քիչ քանակությամբ (մինչև 80 կգ.), և յթե գտնվում են բարձր յեզրեր, բայց և փոքր բերան ունեցող ամանների մեջ։ Դրա պատճառը կայանում է նրանում, վոր իրենց կազմությամբ կարող են տալ վոչ բավարար թանձրության փրփուր։ Այս իսկ պատճառով նրանք հնարավորություն չունեն մաքրելու մեծ, լայն մակերեսով ու շատ քանակով դյուրավառ նյութեր։

Մեր ամենորյա կանքի մեջ պահանջ զգացվեց համարլա բոլոր բնագավառներում դյուրավառ նյութե-

ըի գործածության ծավալման հետ սիասին ձևափոխել և տարածել ուրիշ տիպի և թանձը փրփրով աշխատող կրակմարիչներ, նրանց գործածումով նկատվեց, վոր ավելի թանձը փրփւը ստացվում ե ան ժամանակ, իերբ նատրիում սոդափի և լակրիցալի հետ խառնվում ե քիչ ուժ ունեցող թթվածին, բայց բավականին շատ քանակով:

Այդպիսի կատարելագործված տիպի կրակմարիչ հանդիսանում ե բոգատիր—Ծրեմաս № 3-ը, վոր ավելի շատ և տարածված և ընդունված է վարպես ստանդարտ: Նա ներկայացնում ե զլանաձև գործիք՝ շինված փափուկ պողպատից, ներսի կողմը կրակելու ու կարերը ամրացրած ավտոգեն լեռացումով: Սա Բոգատիր № 1-ից տարբերվում ե նրանով, վոր չունի գրսի ծորակ, իսկ փրփրի անցքը հարմարեցված ե զլխի մասում՝ կափարիչի մոտ ու ավելի լայն ե. լիցքի անցքն ավելի լայն ե. ունի կանթ, վորը միենալին ժամանակ ծառայում ե կախելու համար, իսկ անցքը ծածկվում ե լայն և մեծ նիկելի կափարիչով ու զարկանով: Վորի վարի մասն աստղի ձև ունի:

Հուծութը բաղկացած ե գործարանում լցված 2 շիշ կոլբայից, մեկում պահվում ե 425 գրամ ծծմբաթթու 65⁰, իսկ մյուսում՝ 350 գրամ ծծմբաթթվի խառնուրդը՝ 36⁰ և ալյումինի թթվուտու Փոշու 835 գրամ, խառնուրդը բաղկացած ե նատրիում սոդափից և լակրիցալից:

Կրակմարիչի տարողությունը 9 լիտր եւ Լուծութը գործադրության ժամանակ տալիս ե 72 լիտր փրփուր, կրակմարիչն աշխատում ե մինչ 1¹/₂ րոպե, թանձը փրփուրը ցայտում ե 7—8 մետր լերկարու-

թյան վրա: Մարմնի պատերի հաստությունը 1 մմ. եւ կրակմարիչը փակված վիճակում զարգացնում է մինչև 18⁰ ձնշում, գործադրվում ե № 1 կրակմարիչի պես, իը լուծույթի խառնուրդի շնորհիվ, տալիս ե խիտ ու թեթև փրփուր, այդ պատճառով ել ինքը լինելով թեթև քան դլուրավառ հեղուկ, ծածկում ե վառվոր առարկայի մակերեսը թանձը փրփրով, արգելով ողի անցնելն այրվող առարկային:

Դժվար սառչող լուծույթներ № 1 և 3 կրակմարիչների համար.—Մինչև այժմ մենք խոսեցինք այն կրակմարիչների մասին, վորոնք գործադրվում են տաք տեղերում կամ միշտան տաքացվող շենքերի պահպանման համար և տարվա տաք ժամանակներին:

Հետագայում անհրաժեշտ լեզավ կրակմարիչները նորմալ վիճակում պահպանել նաև չտաքացվող շենքերում և տարվա ամենացուրտ լեզանակներին: Այս առթիվ անհրաժեշտ զգացվեց գործադրության մեջ դնել դժվար սառչող լուծույթ, վորին սովորաբար առում ենք չսառչողը:

Դժվար սառչող լիցք կատարելու դեպքում, պետք ե ավելացնել մի շաբթ լրացուցիչ նյութեր միայն լուծույթի սոդափին մասերին, իսկ թթվածինը մնում է անփոխութ:

Նման նյութեր են՝ ծովալին աղը, գլիցերինը, նաշատիրը և ալլն: Հարց ե ծագում՝ քմնի աստիճան ցրտի լի դիմանում չսառչող կամ դժվար սառչող լուծույթը և վորտեղ ե նրա սահմանը:

Նման լիցքերը դիմանում են 18—25⁰ ցրտի, պես բարձր աստիճան ցուրտ լինելու դեպքում, ինչպես փորձը ցուրտ ե տվել, լերբեմն տրաքվում ե թըթ.

վածնի շիշը սողալի խառնուրդի սովորական փրփրի
ուժով

Քիչ չեն այնպիսի դեղքեր, յերբ ալդ խառնուրդը և
թթվածինը սառչում են նաև 15° C ցածր։ Զսառչող
լուծույթի ուժը պակաս ե սովորական լուծույթներից։

Կրակմարիչի ճիշտ և զոտակար աշխատանքը կախված է
նրա լուծույթի հատկությունից, վորն իր մեջ չպետք է
պարունակի որդանական մասեր, վորոնք, կարող են փչացնել կրակմարիչի մարմինը։

Ինքը՝ լուծույթն աշխատանքի միջոցին չպետք է
մարդու համար վնասակար լինի և թողնի վնասակար
հետեանքներ՝ իր մասերի, մարդկանց հագուստի և նրա-
նով թրջող առարկաների վրա։ Ծծմբաթթվի մասնիկ-
ներն ընկնելով գործադրողի հագուստի վրա, թվում է
թե սկզբում մնաս չեն կարող տալ, բայց վորոշ ժամա-
նակից հետո թափված թթվածինը հագուստն ուստում
է յինթարկում վերջնական փչացման։

Մեր առաջարրած պահանջերն ընդհանրապես Բո-
գասիր կրակմարիչներին։ — 1) Փրփրի ոզոտակար ցալ-
տը համարվում է 6,4 մետր տարածության վրա և ընդ-
հանրապես 8,5 մետրի վրա պետք է ընդգրկի այրվող
տարածությունը, 2) ապարատը պետք է աշխատի ան-
ընդհատ $1\frac{1}{2}$ րոպե, նրա տարողությունն է 9 լիտր
($\frac{3}{4}$ դուզ), 3) ապարատի մասերը պետք է պատրաստ-
ված լինեն այնպիսի նորութերից, վոր ստուգման ժա-
մանակ դիմանան 25° ճնշման, 4) պատրաստելու ժա-
մանակ պետք է գործադրվի ավտոգեն-յեռացում, 5) վե-
րիք արմատուրան պետք է լինի և 3.ի համար նիկե-
լից և և 1.ի համար՝ պղնձից, 6) դուրս ցալտող անց-
քը պետք է լինի 4 մմ., 7) լիցքը պետք է կատարել

պարզ ձևով ու մեկ մարդու միջոցով։ Լիցքի լուծույթի
հետ չպետք ե լինեն այնպիսի մասնիկներ, վորոնք կա-
րող են քայլայել ու վնասել ապարատի մարմինը,
8) լուծույթն ընկնելով հագուստին, չպետք է ազդի
գործվածքի վրա, 9) լուծույթը պետք է պատրաստվի
այնպիսի որգանական մասերից, վոր ապահովի նրա
լրիվ ոգտագործումը կրակմարիչի գործադրության մի-
ջոցին, 10) լուծույթի նյութերը չպետք է փշանան 2
տարվա ընթացքում, 11) գործադրության միջոցին
կրակմարիչի ճնշումը ապարատի փակված ժամանակ
21⁰-ից ավելի չպետք է բարձրանա, 12) կրակմարիչի
ու գանական մասերը պետք է փաթաթած լինեն, վո-
րովհետև փոշին կոշտանում ու նույնիսկ քարանում ե,
13) դժվար սառչող լուծույթների վրա պետք է պարզ
գրված լինի շասուզող լուծույթ, այսինչ և ի։

Նարծական իրվիրածիք կրակմարիչներ։ — Մենք ար-
դեն ասացինք ձեռքի կրակմարիչների մասին, վորոնց
տարրողությունը 9 լիտր է ու տալիս են 72 լիտր փըր-
փուր, ալդ պատճառով ել զյուրավառ հեղուկներով լի-
քը շենքերի, պահեստաների պահպանման համար (մոծ
տարածությամբ մակերես այբվելիս հանգնելու դեպ-
քում) հարկավոր է ունենալ մեծ քանակությամբ կրակ-
մարիչներ։

Այս ինդիքը կանոնավորելու նպատակով գոր-
ծադրության մեջ զրվեցին, այսպես կոչված «Պեհա-
զոնները», վորոնք հանդիսանում են քիմիական կրակ-
մարիչներ՝ տարրողությամբ տվելի շատ, քանի ձեռքի
կրակմարիչները։ Նրանց զլիավոր դերը կալանում է
մեծ քանակությամբ հեղուկներ մարելու մեջ, զլիավո-
րապես բենզինի ու նավթի ձևոնարկությունների, զա-

զազան տեսակի լուղային և քիմիական գործարանների, հեղուկ լցնող և դատարկող նավերի, ողանավային կալաների համար:

Շարժական փրփրաձիգ գործիքներից մեկն ել հանդիսանում է Տիտան պենագոնը, վոր իրենից ներկալացնում ե՝ մեծացրած՝ ձեռքի քիմիական կրակմարիչ։ Շարժական Տիտանը տալիս է 15—20 մետր հեռավորությամբ և 12—16 մետր բարձրությամբ փրփրից այտում։

Այս կրակմարիչի գործողությունը կարելի յէ կանգնեցնել ըստ պահանջի և, կարիք յեղած դեպքում, նորից դնել գործադրության մեջ։ Նա թեթև և շարժվում շնորհիվ նրա, վոր հարմարեցված և ռետինե-պնե-մատիկ շրջանակի վրա և կարելի յէ շարժել մեկ մարդու ուժով։ Այս ապարատն արտադրում է 1100—1200 լիտր փրփուր։ Տիտան պենագոնի բաղկացուցիչ մասերն են, 1) մեծ զլանը (ցիլինդր) և 2) փոքր զլանը, վոր տեղափորված և մեծ զլանի մեջ։ Մեծ զլանը ծածկված է կափարիչով, չորս պտուտակների ոգնությամբ, վորի կենտրոնով անցնում է խցանով պտուտակը և բացվում ու փակվում ե մախավիկով։ Այդ խցանը ծածկում է մեծ զլանի մեջ գտնված փոքր զլանի անցքը։ Ունի հատուկ զսպանակաձև խողովակ (ալանց) և մետր յերկարությամբ և պղնձե փող (ճրանցոյտ), վորի անցքի վրա կա ծորակ։ Նման ծորակ, բայց մեծ չափի, դրված է խառնող կամերի վրա ու ծառայում է ցայտի կանոնավորման համար։

Ամբողջ ապարատը հարմարեցված է 2 փրփած-ռետինե անիզուների վրա և մինչև գործադրելը պահ-կանումք հենակի վրա։ Տիտան-պենագոնի լուծութը

բաղկացած է փոշով լինքը 2 ամանից, վորոնց վրա դրված ե Ա. և Բ. Ա.ն պարունակում ե 9 կտ թթվածին և պարունակում ե ծծմբաթթվուտալին ալյումինե նյու-թեր։ Բ.-ն պարունակում է նույնական 9 կտ սողային փոշի, նատրիում-ածխատթթվալին դառն լուծույթ՝ լակ-րիցային խառնուրդով։

Տիտան պենագոն կրակմարիչի լցնելը կատարվում է հետեւյալ կարգով։ — Ա. փոշին ամբողջովին պետք է լուծել $12^{1/2}$ լիտր մաքուր ջրի մեջ (ցանկալի յէ լեռաց-րած, բայց վոչ տաք), Բ. փոշին պետք է լուծել 125 լիտր (10 դրույ) նույնական մաքուր ջրի մեջ։ Ալյումինով պենագոնն ունի 180 լիտր տարրողություն, վորից Ա.— փոշին բռնում է $12^{1/2}$ լիտր, Բ.—փոշին՝ 125 լիտր և $54^{1/2}$ լիտր դատարկ տարածություն։

Պենագոնը լցնելուց առաջ պետք է դնել հենակի վրա։ Կափարիչը պետք է բացել, դարձնելով 4 պտուտակը և հանել նրան։

Ա.—լուծութը լցված է միջին զլանի, իսկ Բ. լու-ութը՝ մեծ զլանի մեջ, վորից հետո կափարիչը կրկին դրվում է իր տեղն ու ամրացվում նույն պտուտակնե-րով։ Կափարիչի կենտրոնի պտուտակը պետք է դարձ-նել մինչև վրջ, մինչև խցանի ամրանալը, ու ծորակը պետք է փակել։ Պենագոնն այդ յեղանակով լցնելուց հետո զրվում է թեք վիճակում—գործադրության համար պատրաստ։

Պենագոնի գործադրության ձեվր։ — 1) Պետք է բա-ցել մարմնի և փողի վրաի ծորակները, 2) դարձնել կափարիչի կենտրոնից անցնող պտուտակը ու բացել փոքր զլանի բերանը, 3) վերցնել հենակն ու ապարա-տի առջևի մասն իշեցնել գետնի վրա։ Այդ գործո-

դութիւն շնորհիվ, լերկու գլանի մեջ գտնվող հեղուկները միանում են պենագոնի առջևի մասում և արդյունքն ստացվում է այն, վոր ալդ լերկու հեղուկների միանալով ստացվում է փրփուր, վորն ուժեղ ճնշ ման տակ խողովակի ու փողի միջոցով դուրս ե ցուցում:

Մեր պահանջները չոր կրակմարիչներից.— 1) Փոշ. լա չոր կրակմարիչը պետք ե աշխատի անընդհատ և անմերժում 15 վալրկյանից վոչ պակաս, 2) ոգտավետ ցալտը պետք ե հասցնի 3 մետրից վոչ պակսս, վորի ժամանակ պետք ե դուրս դցի ապարատի մեջ լեղած ամբողջ փոշին, 3) նման կրակմարիչներ արտադրելու ժամանակ զաղի հոսելու, հականերգործութիւն հնարավորությունների դեմ անհրաժեշտ ե ձեռք առնել մի շարք նախադպուշական միջոցներ՝ ամուր ծածկելով բալոնը, 4) փոշա բալոնը պետք ե ունենալ լավ հարմարեցված՝ 15⁰ ավելի ճնշման ժամանակ միջից բաց. վող ապահովիչ, 5) ամբողջ արմատուրան պետք ե լինի ամուր և հարմար, պարզ ոգտագործելու և պահպանելու համար, 6) ածխաթթվալին գաղի բալոնը պետք ե ունենալ աղանովիչ, վորը բացվում ե բալոնի միջի տաքությունը 100⁰ ճնշման հասնելու ժամանակ:

Ածխաթթվալին «ձյունածիգ» կրակմարիչներ.— Դեռ մեզ մոտ չտարածված և բոլորովին նոր կրակմարիչ հանդիսանում ե ածխաթթվալին ձյունով կրակմարիչը:

Այս նոր տեսակի կրակմարիչի սկզբունքը հանդիսանում է այն, վոր ածխաթթվութը ձևան պես դուրս ե գցում վառվող մակերեսը, Վարժեղից և ստացվում, այսպես կոչված, ձյունը: Դրա համար հարկավոր է նախորոք ծանոթանալ ապարատի կազմու-

թյան հետ: Ապարատը կազմված է լերկու հիմնական մասերից. 1) գլանավոր պողպատե բալոնից, լցված ածխաթթվածնով, վերևի մասում հարմարեցված և արմատուրան կափարիչով, վորի կենտրոնով զարկանն անցնում ե բալոնի մեջ՝ վարի ծայրը սրած: Զարկանը վերևի ծայրում ունի խփող կնոպկա, իսկ կնոպկակի և կափարիչի մեջ՝ զապանակ, 2) գլանի միջով դեպի ներքեւ անցնում ե ծոված յերկաթե խողովակ, վորի վարի անցքը բաց է,

Այդ խողովակը, վոր միացված ե բալոնի արմատուրի հետ, և վորի վրա ունի ջերմություն չանցկացնող ապահովիչ՝ կոչվում է ձյուն առաջացնող խողովակ:

Արմատուրի մեջ գտնվում է պղնձե տափողակ (շահագ), վորը տեղավորված է միացնող խողովակի վարի մասում, իսկ ինքը, արմատուրան, միացված է մինչև բալոնի տակը գնացող սիֆոնի խողովակի հետ: Բալոնը լցվում է 4 կգ. խտացած ջրալի ածխաթթվածնով և ունի մինչև 70⁰ ճնշում: Կրակմարիչի գործադրության ժամանակ պետք ե սեղմել զարկանի կոճակը (կնոպկան), վորի հետևանքով բացվում ե բարակ պղնձե տափողակը, զարկանը զալանակի ոգնությամբ բարձրանում ե և ընդունում իր նախկին դրությունը, իսկ հեղուկ ածխաթթուն տափողակի անցքով գոլորշու ազդեցությամբ, սիֆոնի խողովակի ոգնությամբ անցնում և միացնող կոր խողովակով ձյուն առաջացնող մասը: Ածխաթթուն անցնելով ձյուն առաջացնող նեղ խողովակից մեծ և լայն խողովակը, վալրկյանարար գոլորշի անում է, առաջացնում ուժեղ սառեցում և հասնում ձյան դրության: Այդ ձյունը զուրս ե զցվում

վառվող առարկայի վրա, գոլորշիանում ե, ալսպիսով սառցնում վառվող առարկայի մակերեսը և առանձնապես ոժանդակում մարելուն, Այդ գործողությանը հատկապես նպաստում ե (ձյան գոլորշիանալու հետեւ վաճքով ստացվող) ածխաթթվալին դազը, վոր հնարավորություն չի տալիս թթվածնին մոտենալու վառվող առարկային: Միքանի դեպքում, զիսավորապես դյուրավառ հեղուկների ալրվելու ժամանակ, ավելի լավ մարելու համար, խտացված ածխաթթվին պետք է խոռնել փրփուր առաջացնող նյութ: Այդ տիպի կրակմարիչը լավ արդյունք ե տալիս մարելու ժամանակ, Այս կրակմարիչի գործադրման ձեզ հասարակ ե, և վոր գլխավորն ե, ելեքտրոնաց չե, վորը հատուկ նշանակություն ունի: Այդ կրակմարիչը հաջողությամբ գործադրվում ե գործարաններում և հիմնարկ ձեռնարկներում, վորտեղ անցկացված ե ուժեղ ելեկտրական հոսանք, պահեստներում, վորտեղ պահվում են զյուրավառ հեղուկներ, հեռախոսային կայաններում, մոտոների պահպանման դեպքում և այլն: Առանձնահատուկ նշանակություն ունեն այդ տեսակի կրակմարիչները, իբրև միջոց, ողաքիմիական պահպանման ժամանակ՝ ալրող ոռումքերից առաջացած հըղեհները մարելու համար և այլն:


ՊԵՆԱԳԵՆԵՐԱՑՈՐ

Այս ապարատը, վորպես շարժական փրփրաձիք, տարբերվում ե միուս կրակմարիչներից նրանով, վոր նրա ջրախառն փրփրանյութը ստացվում է միան հըրդեհի մարելու գործադրության ժամանակ: Ապարատի գործողությունը կատարվում է մաքուրաց միջոցով.

Մի կողմից՝ փոշին լցվում ե պենագեներատորի մեջ, իսկ մյուս կողմից՝ ջուրը դալիս ե շլանգով կամ ջրմուղից անմիջապես և կամ մի այլ ջրհան մեջենալի միջոցով: Այսպիսի դլուրին ձևով պենագեներատորի փրփուր և ջուր տալու ժամանակ հնարավորություն ե լինում իրակար ժամանակ փրփուր ստանալ:

Ցեթեւ հնարավոր լինի ժամանակին ապարատի մեջ լցնել փոշին, վորի միջով անցնելու լեռները, այդ դեպքում հրդեհի մարելու համար շանգի միջոցով կարելի լեռներու անցկացնել անսահմանափակ չափով նյութ:

Պենագեներատորների զանազան ձեռքից կան մոտ 6 տեսակ, բայց ամենաշատ տարածված տեսակներից հանդիսանում ե Տրեմաս գործարանի պենագեներատորը:



ՓԻՇ 1

Շարժական փրփրաձիք Տիտանը չգործադրվող վիճակում

Պենագեներատորը կազմված և հետեւյալ յերեք գլխաւոր մասերից, 1) Լյուող ձագար, ուր պետք և լցնել փոշին, 2) արկղի կամերայի կենտրոնը, փոշին ջրով ծծելու համար, 3) խառնող կամերան, վորի մեջ ջուրը դառնում և փրփուր:

Զագարը պատրաստվում է յերկաթից և ամրացվում ապարատի կենտրոնին պտուտակներով և ունի ցանց, վոր, կարիք յեղած դեպքում, ծածկվում ե հատուկ կափարիչով: Յերկրորդ մասը, այսինքն՝ տուփը կազմում ե վերի մասը վորից անցնուած ևն 4 ճնշող մասեր և ներքին մասը, վորից պենագեներատորի մասն անցնուած և 4 կոնուս, վերադարձ կլապաններով և ողակած խողովակով՝ լրացուցիչ ջուր բաց թողնելու ու խիտ փրփուրը կանոնավորելու համար: Կենտրոնական տուփի վերի մասում միացված է պղնձե շտուցեր, վոր շանգը միացնելու համար ունի յերկու անցք՝ կիսակալակով՝ խցանավոր ծորակով ջուր թողնելու համար, ցանց՝ ամուր մարմիններ չանցնելու համար և մանումետր՝ գեներատորի մեջ անցնող ընդունող շլանգի ճնշումը վորոշելու համար: Ընդունող շտուցերի վրա հարմարեցված ե յերկու ծորակ, մեկը՝ ողակալոր խողակով ջուր բաց թողնելու, իսկ մյուսը՝ պենագեներատորը լվանալու, հարմարեցված շլանգի համար:

Պենագեներատորը վարի մասով հարմարեցված ե յերկաթե կենակին և ունի 3° դուրս զցող անցք՝ կիսակալակով և յերկու կանթ՝ ապարատը տեղափոխելու համար:

Պենագեներատորի քաշն և 25 կտ. լիցքն է չորացրած սողալին. թթվուտային լուծուլթ, վորի 50°/0 ը ծծմբաթթվալին ալյումին և, 45°/0 ը՝ նատրիում ած-


խաթթվալին սողալ և 50°/0 ը՝ լակրիցա: Հրդեհի դեպքում հեշտ տեղափոխություն կատարելու համար, այդ բոլոր խառնուրդը տեղափորված է 15 կտ. տարողություն ունեցող յերկաթե արկղներում:

ՊԵՆԱԳԵՆԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒՄԸ

Պենագեներատորի գործադրության համար շլանգի միացվում է ջրմուղում կամ ջրհան մեքենային՝ կիսակալաների միջոցով, վորոնց ճնշումը պետք է լինի մոնոմետրով 2^{1/2}-ից վոչ պակաս: Դուրս զցող անցքի կիսակալակալին միացվում է նույն չափով շլանգ և փող, վոչի միջոցով փրփուրը հավասարաչափ դուրս և զցում այրվող առարկալի վրա: Ապա բացվում ե ընդունող ծորակը և պենագեներատորի տուփի վերի մասով, այդ տեղից 4-ը կոնուսների միջով գնում ե վարի կամերան և դուրս զցում. յերբ ճնշումը համանում է, մոնոմետրի ցուցմունքով՝ վոչ պակաս 2^{1/2}-ի, ձագարի վերի մասում հավասարաչափ լցվում ե փողին: Փաղութթվուտային և սողալին մասերը կամերում լուծվում, առանձնացնում են գազածե թթվուտ և ջրի հետ միասին փոխվում վրփի, վորն առաջնացած ածխաթթվուտի ճընշման և անընդհատ ստացվող ջրի հետևանքով գուրս և գցվում այրվող առարկալի վրա: Յեթե փրփուրն ստացվում ե շատ թանձր, այդ դեպքում խողովակի միջոցով ծորակի ջուրն ավելացվու մ և և փրփուրը ջրկացվում: Ջրի 2^{1/2} նորմալ ճնշումով պենագեներատորը մեկ բուղելում տալիս ե 1500 լիտր փրփուրից վոչ պակաս և ցալաւում ե մինչեւ 18 մետր բարձրությամբ:

Փոշու լցնելը պետք է կառարվե հավասարաչափ:

այլ կերպ՝ ապաբատը կառանձնացնէ թանձր փրփում։
ու, ժամանակին չլցնելու հետևանքով, փրփուլ կլցվեցագը։



ՓԲ Ա

Շարժական փրփուածիք՝ Տեսանը դործադրվող վիճակում

Պենագեներատորի աշխատելու համար սովորաբար նշանակվում են յերեք հոգի, վորոնցից մեկը լցնուած ե փոշին, մյուսն աշխատում ե հրդեհի մոտ բրանսբոյտով, իսկ յերրորդը հսկում ե զանգներին և ջրի կանոնավոր մատակարարմանը։ Աշխատանքի վերջում թե պենագեներատորը և թե նրա հետ կապված բոլոր մասերը ջրով պետք ե լվանալ, մաքրելու չորացնել (առանց փոշի լցնելու)։



«Ազգային գրադարան»



NL0275927

3973